առաքելական. յաստուածընկալ սրբոյ Նշանէս Վանկոյ, և ի յայլ սուրբ Նշանացս, և ի բազմաշնորհաբաշխ Այջոյս Սրբոյն Գրիգորի, և յերկնահանկէտ սուրբ աթոռոյս մեր սուրբ առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, և ի յայլ բազմութենէն սուրբ Նշխարացս առաքելոց և հայրապետաց և մարտիրոսաց, որք աստ կան հաւաքած. որոց արագահաս և աքանչելագործ կարաւղ զօրութեամբն աւրհնութեամբն և աւգնականութեամբն՝ պահպանեալ փրկեսջիք ի յամենայն որոգայթից փորձութեանց վրտանկից հոգւոյ և մարմնոյ, տամբ և որդաւք և ամենայն գոյիւք. ամէն։

Գիտութիւն լիցի ձեզ ամենեցուն՝ իմ ի Քրիստոս Աստուած յոյժ սիրեցեալ ըստ հոգւոյ ցանկալի որդիք, բազմաշարչար երկեամբք ծնունդք աւետարանաւն ի Քրիստոս Աստուած Սրբոյն Գրիգորի. զի որպէս աւրէն է ծընընդական և մահկանացու բնութեանս փոխանակել զմիմեանս, որպէս որք ունին զմարմնաւորս իշխանութիւն, այսպէս և որք զհոգևորական վերակացութիւն. և ըստ սմին աւրինակի ես ինքն իբր զգթած հայր ի վերա սիրելի որդոց՝ ի վերա ձեր տապացած սիրոմ ի տուէ և ի գիշերի հոգս բազումս էի վասն ձեր, թէ զիա՞րդ էր բարիոք կեանքդ ձեր ի մէջ այլազգ քրիստոնէից, առանց իմաստուն հովուի և հոգևոր առաջնորդի։ Զի թէպէտ որ էք ընդ ձեռամբ մեր, այլ պարտ է հաւատին առանձին քաջ հովիւ ունել և ըստ հոգւոյ վերատեսուչ, զի մի ինասեցին ի յանմարմին գազանէն։ Իսկ այնքիկ որ մինչեւ ցայժմն կային առ ձեզ՝ առանց մերոյ աթոռոյս հրամանի, ոչ էին ուղղակի՝ այլ վարձկանք. և ես մեծաւ պաղատանաւք աւր ըստ աւրէ հայցէի յԱստուծոյ գտանել այր իմաստուն և հանճարեղ՝ ըստ սրտի իմոյ և ըստ գովելի արժանաց ձեր, կացուցանել ձեզ եպիսկոպոս և հոգևոր առաջնորդ. զոր այժմ ըստ հայցուածոց մեր լուաւ Աստուած աղաւթից մեր. և գտաք գովելի և իմաստուն զարժանապատուեալ և զառաքելաշնորհ եպիսկոպոս՝ զՏէր Գրիգորս, եկեալ առ մեզ, և աւրհնեցաք ձեզ եպիսկոպոս, և եդաք զինք ձեզ հովիւ և հոգևոր առաջնորդ. Այլ և մերով բարձր առաքելական և հայրապետական ամէներևելի հրամանաւս պարգևեցաք ըզձեզ՝ ըզԼաւվդ և ըզԱւլայտէմիրտ իւր սահմանեալ վիճակաւդ՝ Լուցկայիւ, իւր սեփական թեմ և վիճակ, աթոռ և հանգստեան տեղի, որպէս մեր քաջ սիրելի որդոյ. և մեծաւ պատուով և ջերմն սիրալից հայրական գթով առաքեցաք զդա առ ձեզ մերով ամէներևելի աւրհնութեամբ հրամայական գրովս, իբր զփեսա ելեալ յառագաստէ՝ ի գրկաց մաւրս կաթուղիկէ և առաքելական եկեղեցւոյ. և աւգնականութեամբ և առաջնորդութեամբ Աստուծոյ գայ առ ձեզ. Զոր և մեր աղօթանուէր պաղատանաւք հայցեմք ի յամենակալ արարչէն ամենայն արարածոց, աղօթիւք Սրբոյն Գրիգորի, զի եկեալ մեծաւ փառաւք գտցէ զձեզ զամենեսեան առհասարակ սիրոմն Քրիստոսի, խաղաղութեամբ չինութեամբ, հոգւոյ և մարմնոյ առողջութեամբ, լի ամենայն բարութեամբ. կալ և շրջիլ ի միջի ձերում ուրախութեամբ, առաքելաբար խրատել և ուսուցանել զձեզ, գնալով յաւրէնս և ի պատուիրանս Աստուծոյ անարատութեամբ. և լիցի մեզ բարեաց